Ավետիք Իսահակյան

Նորից եկան գարնան անո՞ւշ օրերը,

Նորից եկան գարնան անո՞ւշ օրերը,
Ցուպս առնիմ, ընկնիմ սար ու ձորերը. –
Սիրտըս կուզե հեռո՞ւները սավառնել,
Նո՛ր ուղիներ, նո՛ր աշխարհներ թափառել:

Սեգ ժայռերի վայրի, խոլոր բարձունքեն
Վարդեր քաղեմ ու ճակատըս պըսակեմ.
Սարերն ի վեր ամպերի պես բարձրանամ,
Արծըվի հետ այրված կուրծքըս հովին տամ:

Արևն ելավ ոսկի հուսքերն ուսերին,
Ջառ հավքերը իրար անո՛ւշ ձեն տվին.
Սիրտըս զվարթ՝ արտուտի պես թըռվռուն՝
Դեպի արև, դեպի ճամփա է թըռնում:

Եղնիկները ցողաշաղաղ սարն ելան,
Նրանց հետքից թռչկոտելով սարն երթամ.
Խարույկի շուրջ, հովիվների, հոտի քով,
Սերըս երգեմ՝ քաղցր շըվին ծոր տալով:

Որտեղ մըթնի, այնտեղ քնիմ միայնակ,
Վառ աստղերի, կապույտ երկնի ծածկի տակ.
Ուռիները հովերի հետ միասին
Ինձ գուրգուրող օրոր կասեն՝ որ քնիմ:

Եվ ծեգը ինձ համբուրելով ձեն կըտա.
Կուրծքըս լիքը թարմ բուրմունքով կըթնդա.
Ու կարկաչուն աղբյուրների ցողերով
Կըլվացվիմ և կըճախրեմ նոր ճամփով:

Կերթամ հեռո՞ւ անապատներ ու ծովեր,
Կըթափառեմ անհայտ վայրեր, աշխարհնե՞ր,
Ուրիշ ազգեր, ուրիշ սըրտեր տեսնելու
Եվ ամենը հասկանալու, երգելու:

Եվ բընության հըրաշքները կըտեսնեմ,
Ներրա լեզուն, հազար տեսակ, կըլսեմ.
Ուրիշ երկինք, ուրիշ աստղեր գրկելու…
Եվ ամենը խորն զգալու, երգելու…

- Է՞յ դու, անգին, թափառական, վսեմ կյանք,
Հեռուների, անհունների իմ տենչանք.
Քո շնորհիվ հըրեղե՞ն եմ, թևավոր,
Աշխարհն իմս է, գըլխիս տերն եմ ու հզոր…

1903